Նունե Զոմարդյան
ԵՄՀ միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատու, իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, նույն ամբիոնի հայցորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդվածում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության և ԵՄ-ի միջև հարաբերությունների ձևավորման և զարգացման փուլերն ու առանձնահատկությունները: Բացահայտվել են Գործընկերության և համագործակցության մասին երկկողմանի պայմանագրի հիմնական դրույթները, իրագործման հիմնախնդիրները և վերանայման անհրաժեշտությունը: Մատնանշվել են կողմերի միջև հարաբերությունների զարգացման հետագա հնարավորություններ որ՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի նախագծի լույսի ներքո:

Հիմնաբառեր. Եվրոպական միություն, Գործընկերության ու համագործակցության համաձայնագիր, օրենսդրության մոտարկում, Եվրոպական հարևանության քաղաքականություն, Հարևանության և գործընկերության եվրոպական գործիք, Արևելյան գործընկերության ծրագիր, ԵԱՏՄ:

20-րդ դարի վերջում ԽՍՀՄ-ի փլուզման և նրա փոխարեն նորանկախ պետությունների ստեղծման հետ կապված իրադարձությունները, ինչպես նաև Եվրոպական ընկերակցությունների վերակազմավորումը Եվրոպական միության, արմատական փոփոխություններ մտցրեց միջազգային հարաբերությունների և միջազգային իրավակարգի մեջ:

Հայաստանի Հանրապետության՝ որպես նորանկախ պետության և միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտի համար հույժ կարևոր

դարձավ բարիդրացիական հարաբերությունների հաստատումն ու ամրապնդումը պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Ծագած ծանր սոցիալ-տնտեսական խնդիրների պայմաններում տարածաշրջնում խաղաղության հաստատման ու պահպանման, ժողովրդավարության և մարդու իրավունքների ապահովման համար հատուկ կարևորություն տրվեց Եվրոպական միության հետ համագործակցության հաստատմանը: Դա պայմանավորված էր նրանով, որ վերջինս կարևոր դեր էր խաղում տարածաշրջանում և ողջ աշխարհում՝ որպես տնտեսապես զարգացած միավոր, և իր ակտիվ ներդրումն ուներ ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման և պաշտպանության գործում:

Բացի այդ, Եվրոպական միությունն իր ձևավորման պահից ի վեր կատարում էր տնտեսական և քաղաքական ուժի կենտրոնական դերակատարություն Եվրոպայում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացների համար և մինչ օրս էլ հանդես է գալիս այդ գործընթացների արդյունավետ իրավակարգավորման դերում աշխարհի այլ տարածաշրջանների համար:

Հայաստան – Եվրոպական միություն հարաբերություններին անուղղակի կերպով հիմք է դրվել դեռևս 1989 թվականին Եվրոպական ընկերակցությունների, Եվրատոմի և ԽՍՀՄ-ի միջև կնքված Առևտրի և կոմերցիոն ու տնտեսական համագործակցության մասին համաձայնագրով, իսկ անմիջական հարաբերությունները սկսեցին ձևավորվել 1991 թվականից Պարենային անվտանգության և Եվրոպական միության տեխնիկական օգնության ՏԱՍԻՍ ծրագրերի շրջանակներում: Ըստ այդ ծրագրի՝ Հայաստանին տրամադրվող օգնությունը կազմում էր ավելի քան 380 միլիոն եվրո, իսկ հումանիտար օգնությունը՝ 120 միլիոն և նպաստում էր 1990-ականների կեսին ստեղծված մարդասիրական ծանր իրավիճակի մեղմացմանը[1]:

ՏԱՍԻՍ ծրագիրն ուղղված էր իրավական բարեփոխումների, Հայաստանի օրենսդրությունը Եվրոպական միության օրենսդրությանը մոտարկելու և Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելուն օժանդակելու միջոցներով նպաստել Հայաստանում շուկայական տնտեսության ձևավորմանը: Օժանդակության այս գործիքը միջին և փոքր ձեռնարկություններին աջակցելու միջոցով օգնում էր նաև տնտեսության վերականգնման գործընթացներին: Ըստ էության՝ ծրագիրը պահանջված էր տվյալ ժամանակահատվածում և ուղղված էր առկա խնդիրների բավարարմանը: Սակայն սկզբնական շրջանում այն հիմնականում կարգավորվում էր «վերևից-ներքև» մոտեցմամբ, ինչը մասամբ պայմանավորված էր անցումային տնտեսություն ունեցող երկրում ինստիտուցիոնալ շինարարություն իրականացնելու անհրաժեշտությամբ և մասամբ՝ պետական իշխանության մարմինների կողմից ծառացած խնդիրներին ոչ բավարար լուծումներ տա-

1 Հումանիտար օգնությունը կազմում էր 120 միլիոն եվրո և նպաստում էր 1990-ականների կեսին ստեղծված մարդասիրական ծանր իրավիճակի մեղմացմանը: Տես՝ European Neighborhood And Partnership Instrument, Armenia, Country Strategy Paper 2007-2013, էջեր 13-14, http://ec.europa.eu/europeaid/sites/devco/files/csp-armenia-2007-2013_en.pdf, (մուտք՝ 08.04.2017):

լու հանգամանքներով[1]: Այդ իսկ պատճառով Եվրոպական միության հետ հարաբերությունները առաջին փուլում (1991–1996թթ.) գերազանցապես հումանիտար օգնությունների բնույթի էին:

Այնուամենայնիվ, այդ հարաբերությունները հետզհետե սկսեցին փոփոխվել թե՛ իրենց բնույթով, թե՛ որակական մակարդակով, ինչը պայմանավորված էր այն փոփոխություններով, որոնք տեղի էին ունենում հենց Եվրոպական միությունում, նրա արտաքին քաղաքականությունում, անդրկովկասյան հանրապետություններում և միջազգային իրավունքում ընդհանրապես: Այդ գործընթացների արդյունքում Հարավային Կովկասը դառնում է Եվրոպական միության ռազմավարության ուղղություններից մեկը: Տարածաշրջանը դիտարկվում է որպես՝

ա) ԵՄ սահմաններին մոտ գտնվող աշխարհաքաղաքական միավոր, որի կազմի մեջ մտնող երեք հարավկովկասյան երկրների արտաքին քաղաքականությունն ունի վառ արտահայտված եվրոպական ուղղվածություն,

բ) Եվրոպան Ասիայի հետ կապող հիմնական կամուրջ[2]:

Նախանշված մոտեցումներին համապատասխան կողմերի հարաբերությունների մեջ առաջընթացն արձանագրվում է 1996թ-ի ապրիլի 22-ին, երբ Լյուքսեմբուրգում Եվրոպական միության և Խորհրդային Միության նախկին հանրապետությունների միջև կնքվեցին գործընկերության և համագործակցության մասին երկկողմանի պայմանագրեր:

Այս տեսակի պայմանագրերի առանձնահատկությունն այն է, որ դրանք կնքվում են քաղաքական երկխոսության հաստատման, տնտեսական հարաբերությունների հեշտացման, ժողովրդավարական բարեփոխումների խթանման, մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայությունը երաշխավորող իրավակարգի հիմնադրման նպատակներով: Նրանք ինտեգրացիոն նպատակներ չեն հետապնդում, իսկ հանձնայնագրի հիման վրա ստեղծվող կազմակերպական կառուցակարգերն օժտվում են միայն համակարգման և խորհրդատվական լիազորություններով[3]: Ըստ որում, Խորհրդային Միության նախկին հանրապետությունների հետ կնքված պայմանագրերը բնութագրվում են որպես տիպային պայմանագրեր, քանի որ նրանցում առկա են որոշակի ընդհանրություններ:

Նորանկախ պետությունների հետ Եվրոպական միության կնքած պայմանագրերն իրենց բնույթով և բովանդակությամբ, ինչպես նաև համագործակցության ծավալով, միմյանցից տարբերվող փաստաթղթեր էին: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի ու Մոլդովայի հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը բավականին հավակնոտ էին և նախատեսում էին դրույթներ ազատ առևտրա-

1 Տես նույն տեղում (մուտք՝ 08.04.2017):

2 Տես Հարությունյան Ա.Շ., Եվրոպական Միություն, Երևան, Պետական ծառայություն՝ հր., 2005, էջ 452–453:

3 ԳՀՀ շրջանակներում գործում են ՀՀ-ԵՄ Համագործակցության Խորհուրդը, ՀՀ-ԵՄ համագործակցության Կոմիտեն և ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեն:

յին գոտի հիմնադրելու մասին: Կենտրոնական Ասիայի երկրների հետ կնքված նույն կատեգորիայի համաձայնագրերը նախատեսում էին ժողովրդավարության, միջազգային իրավունքի սկզբունքների, մարդու իրավունքների, ինչպես նաև շուկայական տնտեսության սկզբունքների հարգում՝ բացառելով քննարկումները հետագա ցանկացած առևտրային, այսինքն՝ շուկայական հարաբերությունների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ, ինչպես նաև Անդրկովկասի մյուս երկու երկրների հետ կնքված համաձայնագրերում, բացակայում էր ազատ առևտրային գոտի ստեղծելու հնարավորությունը, բայց, ի տարբերություն Ասիական երկրների, նախատեսվում էր առավել սերտ համագործակցություն տնտեսական պայմանների և շուկայական բարեփոխումների իրագործման դեպքում (Համաձայնագրի հոդվ. 4):

Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիրը ընդգրկում էր համագործակցության բոլոր ոլորտները, բացի պաշտպանությունից: Նրա հիմնական նպատակներն էին՝

- քաղաքական կապերի զարգացման միջոցով ապահովել կողմերի միջև քաղաքական երկխոսությունը,
- աջակցել Հայաստանի Հանրապետության ջանքերին՝ ամրապնդելու ժողովրդավարությունը, զարգացնելու տնտեսությունը և ավարտելու անցումը շուկայական հարաբերություններին,
- նպաստել կողմերի միջև առևտրին, ներդրումներին և ներդաշնակ տնտեսական կապերին և այդպիսով խթանել դրանց կայուն տնտեսական զարգացումը,
- հիմք ապահովել օրենսդրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության համար:

Համաձայնագիրը հանդես էր գալիս նաև որպես հիմք իրավական միասնականացման (ունիֆիկացիայի) ջանքերի համար: Եվրոպական միության չափորոշիչներին ներդաշնակեցումը սահմանված էր համաձայնագրի 43-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն որի.

«Կողմերն ընդունում են, որ Հայաստանի Հանրապետության և Ընկերակցության միջև տնտեսական կապերն ուժեղացնելու համար կարևոր պայման է այն, որ Հայաստանի Հանրապետությունում գործող, ինչպես նաև ապագա օրենսդրությունը մերձեցվի Ընկերակցության օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետությունը կձգտի անել այնպես, որ իր օրենսդրությունն աստիճանաբար դառնա համատեղելի Ընկերակցության օրենսդրության հետ»:

Մոտարկման յուրաքանչյուր գործընթաց պայմանավորված է համապատասխան պայմանագրի շրջանակներում սահմանված նպատակներով: Հայաստանի հետ կնքված Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիրն ուներ պարզ բնույթ և ներկայանում էր որպես սկզբնական մակարդակի փաստաթուղթ, որը չէր նախատեսում սերտ

առևտրային հարաբերություններ: Չնայած նրանում առկա քաղաքական պայմանների՝ ամրագրված նպատակները բավարար հավակնոտ չէին, որպեսզի ապահովեին համապատասխանեցումն ու մոտարկումը Եվրոպական միության չափանիշներին[1]: Գործնականում կատարված մոտարկման աշխատանքները ևս ունեին թերություններ, քանզի մնացել էին անավարտ: Խնդիրն այն էր, որ մեծ աշխատանք էր տարվել իրավական մոտարկման, ներառյալ՝ տարբեր ազգային ծրագրերի և մեթոդաբանության մշակման ուղղությամբ, սակայն այդ մեթոդաբանությունների հիման վրա փաստացի մոտարկում չէր իրականացվել[2]:

Այսպիսով՝ Եվրոպական միություն հարաբերությունների զարգացման երկրորդ փուլը բնութագրվում է նոր առաջընթացով, որտեղ հիմնականում որպես դոնոր – օգնություններ ստացող փոխհարաբերությունները վերաձևակերպվում են, ստեղծվում է համագործակցության կառուցվածքային ձևաչափ, ստորագրվում և սկսում է իրագործվել Հայաստան – Եվրոպական Միություն Գործընկերության ու համագործակցության համաձայնագիրը: Միևնույն ժամանակ այդ հարաբերությունները ընդամենը նպատակադրված էին համագործակցություն հաստատել ԱՊՀ երկրների հետ և աջակցել, որպեսզի վերջիններս անցում կատարեն շուկայական տնտեսությանը: Չնայած այն հանգամանքին, որ Եվրոպական հանձնաժողովը մեծ նշանակություն էր տալիս տարածաշրջանային համագործակցությանը, նորանկախ երկրները չունեին առաջարկվող որևէ լուրջ խթան, որը կարևոր կլիներ Եվրոպական միության համար և կկարողանար դրդել վերջինիս ձեռնարկելու ծախսատար և պահանջկոտ բարեփոխումներ[3]: Եվրոպական միությունն ինքնին չէր կենտրոնանում այդ երկրների վրա, մինչև որ նրանք չդարձան իր անմիջական հարևանները:

2004թ. ընդլայնումը հանգեցրեց Եվրոպական միության կողմից հարևան երկրներում նոր ռազմավարական ներդրումներ կատարելու անհրաժեշտության: Եվրոպական միությունը ստիպված էր զբաղվել երեք հիմնական մարտահրավերներով. նախ՝ անհարժեշտ էր երաշխավորել Միության անվտանգությունն ու կայունությունը իր նոր արտաքին սահմանի երկայնքով, երկրորդ՝ պետք էր խուսափել ընդլայնված Եվրոպական միության և հարևան երկրների միջև նոր «բաժանարար գծերի» առաջացումից, և երրորդ՝ ամրապնդել հարաբերությունները այն երկրների հետ, որոնք, թեև չէին հադիսանում ԵՄ անդամ և ոչ էլ անդամության թեկնածու, սակայն ռազմավարական կարևորություն ունեին ԵՄ-ի՝ որպես համաշխարհային դերակատարի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական վերաձևավորման համար: Այս մարտահրավերների հիմնական պատասխանը

1 Տես Anna Hakobyan, The Current Obsolete Legal Framework of EU-Armenia Relations and the Expected Added Value of the Envisaged Association Agreements// «Բանբեր Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», 139.3, Երևան 2013թ., էջ 57:

2 Տես CASE Network Reports, Economic Feasibility, General Economic Impact and Implications of a Free Trade Agreement Between the European Union and Armenia, M. Maliszewska (ed.), N. 80/2008, p. 97-100.

3 Տես Roman Petrov, Legal and Political Expectations of the Neighbour Countries from the European Neighbourhood Policy, The European Neighbourhood Policy: A framework for Modernisation?, EUI, 2006, էջ 6:

եղավ Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ), որն առաջին անգամ ներկայացվեց 2003թ-ին և վերջնական տեսքով գործի դրվեց 2007թ-ին: Եվրոպական հանձնաժողովի հիմնական նպատակն էր ամրապնդել բարեկեցությունը, բարիդրացիությունը, կայունությունն ու անվտանգությունը գործընկեր երկրներում: ԵՀՔ-ն իր մեջ ներառեց ռազմավարություններ, որոնք մի կողմից՝ ուղղված էին համագործակցությանը, իսկ մյուս կողմից՝ անվտանգության ապահովմանը: Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ներառվեցին այն երկրները, որոնք գտնվում էին Եվրոպական միության հարևանությամբ, բայց Եվրոպական միության անդամության թեկնածուներ չէին: Ըստ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիի՝ գաղափարը կայանում էր նրանում, որ Եվրոպական Միության և հարևան պետությունների հարաբերությունները պետք է կառուցվեին այնպես, որպեսզի ապահովեին ինտեգրացիայի այնպիսի աստիճան, ինչպիսին առկա էր անդամ պետությունների միջև, անգամ, եթե հարևան գործընկերները չունեին առաջիկայում Եվրոպական միությանն անդամակցելու կարճաժամկետ հեռանկար[1]:

Եվրոպական հարևանության քաղաքականության մեկնարկը Հայաստանի համար Եվրամիության հետ հարաբերությունների զարգացման երրորդ փուլի սկիզբ ազդարարեց: Ծրագրի շրջանակներում 2006թ-ին ընդունվեց նոր երկկողմանի գործիք՝ Գործողությունների պլան, որը համատեղ մշակված քաղաքական փաստաթուղթ էր և մարմնավորում էր կողմերի ընդհանրություններն ու դրանով իսկ լրացուցիչ արժեք հաղորդում փաստաթղթին: ԵՀՔ մեկնարկից հետո Հայաստանը ձեռք բերեց լրացուցիչ օժանդակություն Եվրոպական միության կողմից, որի նպատակն էր աջակցել բարեփոխումներին ուղղված ջանքերին և ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը:

Հայաստան Եվրոպական միություն համագործակցության այս փուլի գլխավոր նպատակն էր դուրս գալով համագործակցության նախորդ մակարդակի շրջանակներից, էլ ավելի սերտ կապեր հաստատել կողմերի միջև, նպաստել քաղաքական համագործակցության խորացմանը, տնտեսական աճի և աղքատության կրճատման շարունակականությանը: Նախանշված նպատակների իրագործման համար մշակվեցին 2007-2013թթ. Երկրի ռազմավարական փաստաթուղթը և Ազգային ինդիկատիվ ծրագիրը: Ծրագրերն ուղղված էին աջակցելու երեք հիմնական ռազմավարական նպատակների, այն է՝

- ժողովրդավարական կառույցների ամրապնդում և հմուտ կառավարում,
- աջակցություն վարչարարության բարեփոխումներին և վարչական կարողությունների զարգացում,
- աջակցություն աղքատության հաղթահարման ջանքերին[2]:

Նպատակների իրագործման համար ներմուծվեց արտաքին օգնության

1 Տես Filippo Celata, Raffaella Coletti, Neighbourhood Policy and the Construction of the European External Borders. GeoJournal Library. Volume 115, Springer International Publishing Switzerland 2015, էջեր 1-2:
2 Տես European Neighborhood And Partnership Instrument, Armenia, Country Strategy Paper 2007-2013, էջ 4, http://ec.europa.eu/europeaid/sites/devco/files/csp-armenia-2007-2013_en.pdf, (մուտք՝ 08.04.2017):

տրամադրման նոր՝ Հարևանության և գործընկերության եվրոպական գործիքը, որը ներառում էր ոչ միայն ազգային, այլև անդրազգային, տարածաշրջանային, անդրսահմանային և թեմատիկ բաղադրիչներ: Արտաքին օգնության նոր գործիքի ներդրումը բարձրացրեց Եվրոպական միության կողմից տրամադրվող օգնությունների ճկունությունը, որի հետևանքով տեխնիկական օգնություններն այլևս չպետք է գերակշռեին այդ (արտաքին օգնության) ծրագրերում: Անհրաժեշտության դեպքում Հայաստանը կարող էր աջակցություն ստանալ մասնակցելու Ընկերակցությունների ծրագրերում, գործակալություններում և ցանցերում, որոնք բաց կլինեն երկրի համար:

Հարևանության և գործընկերության եվրոպական գործիքը հնարավորություն էր տալիս առանց երկկողմանի իրավական պարտավորությունների մեջ մտնելու կարգավորել կոլեկտիվ բնույթ կրող հարաբերություններ: Այլ կերպ՝ այդ ծրագրային գործիքների հիմքում ընկած փաստաթղթերը, որպես կանոն, կրում էին ոչ թե իրավական, այլ քաղաքական բնույթ և հնարավորություն էին տալիս մեկ միասնական ձևաչափով միաժամանակ հարաբերություններ հաստատել մեկից ավելի երրորդ պետությունների հետ[1]:

Այս գործընթացների խորացման խթան հանդիսացավ Արևելյան գործընկերության ծրագիրը, որտեղ արդեն ուրվագծվեց այն գաղափարը, որ փոխադարձ հարաբերությունների իրավական կարգավորման հաջորդ փուլը կիրականացվի Փոխկապակցման, ինչպես նաև Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրերի հիման վրա: Այս ծրագրի հիմնադրույթները ձևակերպելիս Եվրոպական միությունը նշեց, որ կենսական կարևոր հետաքրքրություն ունի արևելյան սահմաններում կայունություն, լավ վարչարարություն և տնտեսական զարգացում տեսնելու հարցում, ինչպես նաև այն, որ Արևելյան Եվրոպայի գործընկերները և Հարավային Կովկասը ցանկանում են խորացնել իրենց հարաբերությունները Եվրոպական միության հետ, և Եվրոպական միությունը ուժեղ աջակցություն կցուցաբերի Միությանը մոտենալու նրանց ջանքերին:

Արևելյան գործընկերության ծրագրի իրականացման պաշտոնական հիմքը հանդիսացավ 2009թ. մայիսի 7-ին Պրահայում ԵՄ և Արևելյան գործընկեր պետությունների ղեկավարների կողմից ընդունած համատեղ հռչակագիրը, որը նույնպես քաղաքական բնույթ կրող փաստաթուղթ էր: Այն նախորդ ծրագրի պես ևս որպես հեռահար նպատակ չէր նախատեսում Եվրոպական միությանն արևելյան գործընկերների անդամակցությունը, սակայն ավելի իրատեսական էր դարձնում փոխկապակցման համաձայնագրի կնքման հնարավորությունը: Բացի այդ Արևելյան գործընկերության մասին հռչակագիրն ուղղակիորեն վերապահում է պարունակում առ այն, որ կնքվող փոխկապակցման համաձայնագրերն ուղղված են լինելու ազատ առևտրային գոտիների ստեղծմանը: Առևտրի ազատ գոտու առանձնահատկությունները պայմանավորված էին Եվրոպական միության դատա-

1 Տե՛ս Եվրոպկան միության իրավունք, ուսումնական մյութերի ժողովածու. Եր.: «Բեկոր-հրատ» ՍՊԸ, 2014, էջ 208:

րանի կողմից Demirel-ի գործում[1] սահմանած դիրքորոշմամբ, ըստ որի «Փոխկապակցման համաձայնագիրը հատուկ, արտոնյալ կապ էր ստեղծում Եվրոպական միության և ոչ անդամ պետության միջև՝ հնարավորություն տալով վերջինիս գոնե որոշ առումով մասնակցություն ունենալ Եվրոպական միության համակարգում»: Որոշման մեջ սահմանված «ոչ անդամ պետություն» բառակապակցությունն օգտագործվում էր լայն իմաստով և Եվրոպական միության համակարգում մասնակցության իրավունք ունեցող սուբյեկտ էր ճանաչում ոչ միայն տվյալ պետությանը, այլ նաև նրա քաղաքացիներին: Առևտրի ազատ գոտի ստեղծելու վերաբերյալ պայմանագրի ստորագրումը կարող էր նոր հնարավորություններ բացել Հայաստանի համար: Հայաստանի Հանրապետոության հետ փոխկապակցման պայմանագարի ստորագրման դեպքում, վերջինիս դրույթները կտարածվեին նաև Հայաստանի իրավաբանական և ֆիզիկական անձանց վրա: Փոփոխություններ կմտցվեին ընդհանուր ինստիտուտների համակարգում: Փոխկապակցման խորհուրդը կունենար պարտադիր բնույթի որոշումներ ընդունելու լիազորություններ, որոնք կունենային ուղղակի գործողություն:

Այսպիսով, եթե Եվրոպական հարևանության քաղաքականությունը հավասար մոտեցում էր դրսևորում ծրագրում ներգրավված երկրների նկատմամբ, ապա Արևելյան գործընկերությունը բնութագրվում է յուրաքանչյուր պետության հանդեպ անհատական մոտեցմամբ, որի արդյունքում այն երկիրը, որի իրականացված բարեփոխումներն արդյունքում ավելի կհամապատասխաներ եվրոպական չափանիշներին, կստանար ինտեգրացիայի ավելի մեծ աստիճան:

Հայաստան – Եվրոպական միություն փոխկապակցման համաձայնագրի և Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ աշխատանքներն իրականացվեցին 2010-2012թթ-ի ընթացքում և ավարտվեցին 2013թ-ին: Սակայն տվյալ ժամանակահատվածում տարածաշրջանում և միջազգային հարաբերություններում տեղի ունեցած հերթական տեղաշարժերը, ինչպես նաև տարբեր տնտեսական և ռազմաքաղաքական միությունների ստեղծումը փոխություններ մտցրեցին Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններում: 2013 թ-ի սեպտեմբերի 3-ին Հայաստանը որոշում ընդունեց չնախաստորագրել Եվրոպական միության հետ Փոխկապակցման համաձայնագիրը և հայտարարեց Մաքսային միությանն անդամակցելու մասին:

Եվրոպական միության հետ հարաբերությունների չորրոդ՝ Արևելյան գործընկերության փուլը, որը ենթադրում էր ինտեգրացիոն գործընթացների սերտացում և առևտրային հարաբերությունների խորացում, ավարտվեց առանց համապատասխան պայմանագրի ստորագման և ինտեգրացիոն գործընթացներում առաջնահերթությունների վերաձևակերպման:

Չնայած այդ հանգամանքին՝ Հայաստանը շարունակեց վարել հավա-

1 Տե՛ս Case 12/86 Meryem Demirel v Stadt Schwäbisch Gmünd http://curia.europa.eu/juris/liste.jsf?language=en&num=C-12/86 (մուտք՝ 12.04.2017):

սարակշիռ արտաքին քաղաքականություն՝ հնարավորինս համադրելով ինտեգրացիոն տարբեր ուղղությունները, և նույն թվականի նոյեմբերին Վիլնյուսում ԵՄ-ի հետ համատեղ հայտարարություն տարածեց առ այն, որ վերահաստատում է Արևելյան գործընկերության շրջանակներում համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու կողմերի հանձնառությունը՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում՝ շեշտելով կողմերի հարաբերությունների իրավական հիմքը վերանայելու և արդիականացնելու կարևորությունը[1]:

Եվրոպական միությունը համագործակցության նոր, տարբերակված մոտեցում ցուցաբերեց Հայաստանի նկատմամբ և հետագա համագործակցությունը կենտրոնացրեց տեղաշարժի, վիզաների, ուսանողների փոխանակման, գիտական հետազոտությունների, ինչպես նաև Եվրոպական միության համայնքային ծրագրերում և գործակալությունների աշխատանքում Արևելյան գործընկերության երկրների ավելի շատ մասնակցության վրա:

Միևնույն ժամանակ 2014թ. նոյեմբերին Հայաստանը տեղեկացրեց Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, որ մտադիր է վերանայել մաքսային սակագների իր պարտավորությունները և անդամակցել Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ), որի լիիրավ անդամ դարձավ 2015թ. հունվարի 2-ից:

Տեղաշարժեր նկատվեցին նաև Եվրոպական միության ներքին և արտաքին քաղաքականությունում: Ներքին խնդիրները կապված էին տնտեսական ճգնաժամի հաղթահարման և ինտեգրացիոն գործընթացների հետագա խորացման խնդիրների հետ: Եվրոգոտուց դեպի իրական Տնտեսական և Արժույթային միություն ընթանալու համար առաջարկվեց ազգային տնտեսական քաղաքականության ձևավորման կանոնների համակարգից և ղեկավար սկզբունքներից անցում կատարել դեպի ընդհանուր ինստիտուտների ներսում ինքնիշխանության բաշխման համակարգին: Գործնականում դա պահանջելու էր անդամ-պետություններից էլ ավելի շատ համատեղ որոշումներ կայացնել իրենց ազգային բյուջեների և տնտեսական քաղաքականությունների տարրերի վերաբերյալ[2]: Սակայն, մինչ Եվրոպական Միությունը քննարկումներ էր ծավալում հարկաբյուջետային (ֆիսկալ) քաղաքականության կենտրոնացման խնդիրների շուրջ, մի շարք հետազոտողներ, քաղաքական գործիչներ և անդամ պետություններ վտանգված համարեցին նրա կազմի մեջ մտնող պետությունների ինքնիշխանությունը: Այդ վտանգի սպառնալիքի ներքո Մեծ Բրիտանիայի ժողովուրդը 2016թ. հունիսին անցկացրած հանրաքվեի ժամանակ քվեարկեց Եվրոպական

1 Տես Արևելյան Գործընկերության Գագաթնաժողովի Համատեղ Հռչակագիր, Վիլնյուս, նոյեմբերի 28-29, 2013թ. Արևելյան գործընկերություն. ապագային ընդառաջ, էջ 3: http://mfa.am/u_files/file/Declaration_29112013.pdf (մուտք 12.04.2017)

2 Տես The Five President's Report: Completing Europe's Economic and Monetary Union. Report by: Jean-Claude Juncker in close cooperation with Donald Tusk, Jeroen Dijsselbloem, Mario Draghi and Martin Schulz. First published on 22 June 2015, էջ 5//https://ec.europa.eu/commission/publications/five-presidents-report-completing-europes-economic-and-monetary-union_en (մուտք՝ 10.04.2017):

միության կազմից դուրս գալու օգտին, իսկ ավելի ուշ Իտալիայի բնակչությունը մերժեց կառավարության առաջարկած սահմանադրական բարեփոխումների փաթեթը, որը ենթադրում էր Եվրոպական միության ինստիտուտների դերի ուժեղացում՝ ի հաշիվ ազգային իշխանությունների, հատկապես՝ օրենսդրի դիրքի թուլացման:

Արտաքին կապերի տեսանկյունից Եվրոպական միությունը շարունակեց ընդլայնել իր առևտրային և տնտեսական հարաբերությունները երրորդ երկրների հետ: Փոխկապակցման պայմանագրեր նախաստորագրվեցին Մոլդովայի և Վրաստանի, մասամբ նաև Ուկրաինայի հետ, ինչն ավելի սերտացրեց վերջիններիս կապը եվրոպական շուկայի հետ: Փաստորեն, չնայած ներքին քաղաքականության զարգացումներում առաջացած ճեղքվածքին, Եվրոպական միությունը շարունակում է կարևոր դեր խաղալ տնտեսական գործընթացներում, իսկ նրա շուկան աշխարհի ամենամեծ շուկաներից մեկն է:

Նոր իրականությունը թելադրում էր նոր պայմաններ: Եվրոպական ինտեգրման գործընթացների որոշակի դանդաղեցումները 2015թ. աշնանը փոխարինվեցին ակտիվ բանակցություններով նոր, պարտադիր իրավական ուժ ունեցող, համալիր համաձայնագիր նախապատրաստելու շուրջ, որը պետք է փոխարինի գործող Հայաստան – Եվրոպական միություն Գործընկերության և համագործակցության համաձայնագրին: Համաձայնագրի նախաստորագրումն իրականացվեց 2017թ. մարտի 21-ին: Նոր համաձայնագիրը ընդգրկում է հետևյալ հիմնական ոլորտները՝

- քաղաքական և իրավական հարցեր,
- սեկտորալ համագործակցություն տնտեսության և քաղաքականության բնագավառներում,
- առևտուր և ներդրումներ:

Համաձայնագիրը հանդիսանալու է շրջանակային փաստաթուղթ, որի դրույթները, կապված առանձին հարցերի հետ, երկկողմանի համաձայնագրերի հիման վրա կունենան հետագա զարգացման կարիք: Դա նշանակում է, որ համաձայնագրի հիմքի վրա պետք է ձևավորվի Հայաստան – Եվրոպական միություն փոխհարաբերությունների երկկողմանի համաձայնագրերի մի նոր համակարգ: Իհարկե, այդ հարաբերությունները չեն կարող այնքան խորը լինել, ինչպես Մոլդովայի, Վրաստանի կամ Ուկրաինայի դեպքում, առավել ևս նախատեսել ազատ առևտրի գոտու ստեղծում, բայցևայնպես, ուղղված կլինեն գործունեության տարբեր բնագավառներում համագործակցության խորացմանը:

Եվրոպական միության հետ համագործակցության նոր հարաբերություններ կառուցելիս կարևոր է հաշվի առնել Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին, քանի որ 2012թ-ից գործող Եվրասիական տնտեսական հանձնաժողովը հանդիսանում է վերազգային մարմին, որին անդամ պետությունները փոխանցել են իրենց որոշ իրավասություններ, այդ թվում՝ առևտրի բնագավառում: ԵԱՏՄ-ի իրավասություններին է պատկանում նաև

ազատ առևտրի գոտի ստեղծելու վերաբերյալ որոշումներ կայացնելը: Դա նշանակում է, որ առևտրի և տնտեսության հարցերի քննարկումները Եվրոպական միության հետ չեն կարող իրականացվել միայն ազգային մակարդակով, և անհրաժեշտ է հաշվի առնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի իրավասությունները, ընդունված իրավական ակտերը, ԵԱՏՄ-ի շրջանակներում գործող միասնական մաքսային սակագինը: Բացի այդ, պետք է հաշվի առնել որոշ շրջանակների, այդ թվում նաև Ռուսաստանի Դաշնության այն դիրքորոշումը, որ եվրասիական և եվրոպական միավորումների փոխհարաբերությունները պետք է կառուցվեն վերազգային մարմինների, այն է՝ Եվրոպական և Եվրասիական հանձնաժողովների միջև: Այսպես, Կիրառական համակարգերի վերլուծության միջազգային ինստիտուտի և Զարգացման եվրասիական բանկի կողմից ներկայացրած զեկույցը առաջարկում է Եվրոպական միության և ԵԱՏՄ-ի միջև իրագործել «Լիսաբոնից Վլադիվոստոկ» ընդհանուր տնտեսական տարածք հայեցակարգը[1]: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն փաստին, որ այսօր Ռուսաստանի նկատմամբ գործում են սանկցիաներ, որի շրջանակներում վերջինիս փոխհարաբերությունները ԵՄ-ի հետ սահմանափակվել են, և Ռուսաստանը ակտիվորեն օգտագործում է ԵԱՏՄ-ի հարթակը այդ հարաբերությունների կարգավորման համար, ինչի արդյունքում տվյալ կառույցի հանդեպ եվրոպական դիրքորոշումն ազդում է նաև Հայաստանի վրա:

Այնուամենայնիվ, նոր համաձայնագիրը առաջընթաց է նախատեսում առևտրի և ներդրումների բնագավառում, կենտրոնանում է առևտրի ոլորտում մի շարք տեխնիկական և այլ խոչընդոտների վերացման, ինչպես նաև կողմերի տնտեսական միավորումների անդամակցության պայմանների պահպանման վրա: Այս ոլորտի ակտիվացման պայմաններում Հայաստանը պետք է ձգտի առաջիկայում կատարել այնպիսի քայլեր, որոնք կբարձրացնեն ներդրումների ծավալները և երաշխիքները, հնարավորություն կընձեռնեն ոչ միայն ամրագրել Հայաստանի քաղաքացիների և տնտեսվարողների շահերի պաշտպանության սկզբունքային հիմքերը, այլև կկարողանան իրականացնել միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ապահովելու Հայաստանի Հանրապետության մասնավոր անձանց իրավունքների պաշտպանությունը ԵՄ անդամ երկրներում:

Այսպիսով՝ Հայաստան – Եվրոպական միություն հարաբերությունների ներկայիս փուլում որպես Հայաստան – Եվրոպական միություն փոխհարաբերությունների կարգավորման իրավական հիմք շարունակում է հանդես գալ Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիրը, որը ի սկզբանե կնքված լինելով 10 տարի ժամկետով, դեռևս շարունակում է ինքնաբերաբար երկարաձգվել Համաձայնագրի 94-րդ հոդվածում ամրա-

1 Տե՛ս Европейский союз и Евразийский экономический союз: долгосрочный диалог и перспективы соглашения. Доклад №38 — СПб.: ЦИИ ЕАБР, 2016, էջ 5// http://www.eabr.org/general/upload/reports/EDB_Centre_2016_Report_38_EU-EAEU_RUS.pdf (մուտք՝ 20.04.2017):

գրված դրույթներին համապատասխան: Համաձայնագիրը, ինչպես արդեն նշել ենք, սկզբնական մակարդակի փաստաթուղթ էր, որը միտված էր համագործակցության հաստատմանը և աջակցում էր երկրում շուկայական տնտեսության ձևավորմանը: Ներկա փուլում այն շատ հարցերում հնացել է, քանզի հաշվի չի առնում Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին, Եվրոպական միության աշխարհագրական և քաղաքական փոփոխությունները, չի համապատասխանում Եվրոպական միության հետ առևտրային արդի հարաբերությունների բնույթին և վիճակին: Այդ իսկ պատճառով Հայաստան – Եվրոպական Միություն հարաբերությունների այսօրվա կարևորագույն խնդիրներից է փոխհարաբերությունների իրավապայմանագրային բազայի վերաձևակերպումը: Հայաստան – Եվրոպական միություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի նախաստորագրումը նոր հնարավորություններ կընձեռնի կողմերի հետագա բազմակողմ հարաբերությունների զարգացման համար[1]:

Нуне Джомардян
Руководитель Центра международных связей и исследований Международного университета Евразия, заместитель заведующего юридической кафедры, соискатель кафедры

ЭТАПЫ И ПРАВОВЫЕ ОСНОВАНИЯ РАЗВИТИЯ ВЗАИМОТНОШЕНИЙ МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ И ЕВРОПЕЙСКИМ СОЮЗОМ

В статье рассмотрены процессы становления, этапы развития и особенности взаимоотношений между Республикой Армения и Европейским Союзом. Выявлены основные положения двустороннего соглашения о партнерстве и сотрудничестве, основные проблемы применения и необходимости его пересмотра. Указаны возможности дальнейшего развития отношений между сторонами в свете всеобъемлющего и расширенного соглашения о партнерстве.

Ключевые слова: Европейский Союз, Соглашение о партнерстве и сотрудничестве, сближение (гармонизация) законодательства, Европейская политика добрососедства, Европейский инструмент добрососедства и партнерства, Программа Восточного партнерства, ЕАЭС.

1 Հայաստան – Եվրոպական Միություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի քաղաքական և իրավական հարցերը մեր կողմից կմեկնաբանվեն առանձին և ընդլայնված հոդվածում:

Nune Jomardyan
Head of International Relations and Research Center,
Deputy Head of Law Department at Eurasia International University,
Ph.D. student

STAGES AND LEGAL BASIS FOR THE DEVELOPMENT OF RELATIONSHIPS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE EUROPEAN UNION

The article considers the processes of formation, stages of development and features of the relationships between the Republic of Armenia and the European Union. The article is revealed to the main provisions of the bilateral agreement on partnership and cooperation, the main problems of application and the need for its revision. The possibilities of further development of relations between the parties in the light of the draft of comprehensive and expanded partnership agreement are indicated.

Key words: European Union, Partnership and Cooperation Agreement, approximation of legislation, European Neighbourhood Policy, European Neighbourhood and Partnership Instrument, Eastern Partnership Program, EAEU.